Քրեական դատավարության «ողջամիտ ժամկետ» սկզբունքի ի հայտ գալու պատմական նախադրյալները

Ավագյան Գ.Պ.
ՀՀ պետական կառավարման ակադեմիա (Հայաստան, Երևան)
geoavagyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ օրենք, դատավարական ժամկետ, դատական համակարգ, դատական պաշտպանություն, ողջամիտ ժամկետ, քրեական, քրեական դատավարության, օրենսգիրք:

Исторические основы принципа «разумный срок» в уголовном процессе

Авагян Г.П.
Академия государственного управления РА (Армения, Ереван)
geoavagyan@gmail.com

Резюме: Данная статья посвящена истокам термина «разумный срок», его историко-правовому развитию,. В статье автор подчеркнул важность термина "разумный срок". В статье автор подчеркнул важность термина «разумные сроки», сделал исторический и юридический обзор. Статья основана на международных правовых актах и национальных положениях, а также на источниках иностранных юристов.
Ключевые слова: закон, судебный срок, судебная система, судебная защита, разумный срок, уголовный, уголовный процесс, кодекс.

Historical bases of the principle "the reasonable term" in criminal trial

Avagyan G.P.
Public Administration Academy of RA (Armenia, Yerevan)
geoavagyan@gmail.com

Abstract: This article is devoted to sources of the term "reasonable term", its historical and legal development. In article the author emphasized importance of the term "reasonable term". In article the author emphasized importance of the term "reasonable terms", made the historical and legal review.
This article is devoted to disclosure of the term "reasonable term", its contents and the legal description which provides implementation of a problem of the criminal and criminal procedure law. In article the author emphasized importance of the term "reasonable term", carried out comparative analysis. Article is based on the international legal acts and national provisions and also on sources of foreign lawyers.
Keywords: law, judicial term, judicial system, judicial protection, reasonable term, criminal, criminal trial, code.

Քաղաքացիական, քրեական եւ վարչական դատավարության կարգով սուբյեկտիվ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում գործի քննության ապահովում: Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչներից է: Այն նպատակ ունի բոլոր շահագրգիռ անձանց պաշտպանել երկարատեւ եւ անվերջանալի ձգձգվող դատավարություններից, անորոշ վիճակներից եւ ապահովել արադարադատության իրականացումն առանց ավելորդ ձգձգումների, ինչը կարող է վտանգել գործի քննության արդյունավետությունն ու վստահելիությունը[1]:

Ընդհանրապես, դատավարական ժամկետների եւ դատական գործերի քննության անհարկի ձգձգումների հիմնահարցը անցել է լուրջ պատմահրավական զարգացում: Օրինակ՝ դեռեւս Պյոտր 1-ին կայսեր ժամանակ ընդունված Գլխավոր կանոնադրության (1720 թ.) 4-րդ գլուխը վերաբերում էր դատավարության ժամկետներին[2]: Դեռեւս այդ ժամանակաշրջանից հնարավոր լուծումներ էին փորձում գտնել, որով հնարավոր կլիներ խուսափել դատավարական ձգձգումներից: Մաս-

[1] Տե՛ս Հ.Մ.Տեր-Վարդանյան, Արդար դատաքննության իրավունքի սահմանադրական հիմքերը ՀՀ-ում, Երեւան, 2009թ. էջ 111:
[2] Տե՛ս Реформы Петра I. Сборник документов/сост. В.И. Лебедев. М., 1937, էջ 378:

նավորապես սահմանված էր, որ «ով դատակոչված է որպես վկա, պարտավոր է ներկայանալ դատավարությանը: Իսկ անհարկի չներկայանալու, գործը ձգձգելու համար կարող է ենթարկվել պատասխանատվության»: Ինչպես վկայում են այդ ժամանակաշրջանի ռուսական իրավաբանական աղբյուրները, դեռեւս այդ ժամանակահատվածում դատավարությունների հիմնական խնդիրն էր ամեն կերպ վերջ դնել դատավարական անհարկի ձգձգումներին՝ ապահովելով դատական ակտերի օրինականությունն ու արդարադատությունն առհասարակ:

Չնայած այդ ամենին՝ կառավարողների բոլոր կոչերը չտվեցին ցանկալի արդյունք. քրեական գործերը տարիներով շարունակում էին մնալ չքննված, իսկ դատավարության մասնակիցների իրավունքները՝ չպաշտպանված: Այդ ամենի հետեւանքով նկատվում էր դատական իշխանության հեղինակության անկում:

XVIII դարի երկրորդ կեսին իշխանության եկած Եկատերինա 2-րդ թագուհու իշխանությանն այդ ամենը չէր կարող բավարարել, եւ իրավաբանները հետամուտ եղան իրավիճակի շտկմանը: Եկատերինա 2-րդի 1763թ. փետրվարի 10-ի հրամանը՝ «Գողության, ավազակության եւ ազատազրկման կարգավորման մասին»[3], սկսվում էր այն թեզով, որ դատավարության ձգձգումները մեծ վնաս են հասցնում պետությանը եւ ցուցում էր տրվում բոլոր քրեական գործերը լուծել մեկ ամսվա ընթացքում: Այդ ամենի կենսագործման համար Եկատերինա 2-րդը ստեղծեց Սենատին կից հատուկ հանձնախումբ, որը պետք է հետեւեր դատավարական ժամկետների հըստակ պահպանմանը:

1864թ. քրեական դատարանակազմության կանոնագրքում, ի տարբերություն Պյոտր 1-ի եւ Եկատերինա 2-րդի ժամանակաշրջանի նորմատիվ ակտերի, բացակայում էր քրեական գործերի քննության առավելագույն ժամկետը կարգավորող նորմը: Այդ մասին չխոսվեց նաեւ ավելի ուշ ընդունված նորմատիվ իրավական ակտերում: Օրենսդրի նման տրամաբանությունը շատ դեպքերում անհասկանալի էր, որովհետեւ դատավարական ժամկետների առավելագույն սահմանի ոչ հստակ կարգավորումը եւ դրանց նախատեսված չլինելը խախտում էր ողջամտության սահմանները եւ դատական քաշքշուկների համար նախադրյալներ ստեղծում:

Օրենսդրության հետագա զարգացումն իր արտացոլումը գտավ Խորհրդային Ռուսաստանի 1923թ. քրեական դատավարության օրենսգրքում, որում որոշակի իրավակարգավորումներ տեղ գտան՝ ուղղված դատական ժամկետների անհարկի ձգձգման արգելքին[4]: 1960թ. ՌՍՖՍՀ եւ 1961թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքերն արդեն դատական գործերի արագ քննությունը դիտարկում էին որպես քրեական դատավարության կարեւորագույն սկզբունքներից մեկը:

2010թ փոփոխություններ եւ լրացումներ կատարվեցին գործող ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում, որը լրացվեց «քրեական դատավարության ողջամիտ ժամկետը» 6.1 հոդվածով[5]: Բացի այդ, ընդունվեց Դաշնային օրենք, որը կարգավորում էր դատավարության ողջամիտ ժամկետի իրավունքի խախտման եւ դատական ակտը ողջամիտ ժամկետում չկատարելու հետեւանքով մարդու իրավունքների ենթադրյալ խախտման դեպքերը:

Ողջամիտ ժամկետում գործերի քննության իրավունքն իր ամրագրումն է գտել նաեւ եվրոպական իրավունքի կարեւորագույն փաստաթղթերում: Այսպես՝ «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի[6]» 6-րդ հոդվածը ողջամիտ ժամկետում գործերի քննությունը համարում է պետության պոզիտիվ պարտականություն՝ առանձնացնելով այն արդար դատաքննության իրավունքի բովանդակության մեջ: Այս առումով հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորումն առ այն, որ պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է

[3] Տե՛ս Законадательство Екатерины II, в 2т./ отв. ред. О.И.Чстеяков, Т.Е.Новицкая. М., 2001, էջ 984:

[4] Տե՛ս Уголовно-процессуальный кодекс РСФСР 1923 года (Электронный ресурс). КонсультантПлюс: справ правовая система. Версня Проф. М., 2012:

[5] Տե՛ս О внесении изменений в отдельные законодательные акты РФ в связи с принятием Федерального закона <<О компенсации за нарушение права на судопроизводство в разумный срок или права на исполнение судебного акта в разумный срок>>: Федеральный закон N69-Ф3 от 30 апреля 2010г. //СЗ РФ 2010:

[6] Ընդունվել է 4 նոյեմբերի, 1950թ: Հռոմ, այսուհետ՝ Կոնվենցիա:

իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որպեսզի դատարանները հնարավորություն ունենան պահպանել ժամկետների ողջամտությունը[7]:

«Ողջամիտ ժամկետի» էությունը ենթադրում է ողջամիտ ժամկետում դատական ակտի կայացում, դրանով իսկ վերջ տալով անորոշությանը, որում գտնվում է այս կամ այն անձը՝ կապված նրա քաղաքացիաիրավական կարգավիճակից կամ նրան առաջադրված քրեական մեղադրանքից:

Համաձայն Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշման՝ ողջամիտ ժամկետը մի ժամանակահատված է, որը թույլ է տալիս խուսափել քրեական գործի հետաքննության ու քննության ժամանակ ծայրահեղ, չհիմնավորված ձգձգումներից:

Վերլուծելով ՄԻԵԴ որոշումները գործողության տեւողության ողջամտության հիմնախնդրի հետ կապված՝ Ի.Ն.Սամիլինան փորձել է սահմանել «ողջամիտ ժամկետներ» եզրույթը՝ դրան հակադարձելով «ձգձգում» եզրույթը, որն ունի հետեւյալ նշանակությունները՝ «գործի կամ որևէ հարցի լուծման անբարեխիղճ ձգձգում, ինչպես նաեւ գործի դանդաղ ընթացք, որը բարդանում է մանր ձեւականություններով, օրինակ՝ ավելորդ գրագրությամբ», «ճյուղավորումներ դատական գործերում, դատական գործերի դանդաղկոտություն կամ չարաշահում»:

Պետք է նշել, որ «ժամկետ» հասկացությունը ինքն իրենով քրեական դատավարության առումով մեկնաբանվում է ոչ միանշանակ: Այսպես՝ Վ. Մ. Ժուկովսկին համաձայն չէ Ի. Մ. Զայցևի և Ռ.Խ.Յակուպովի հետ, ովքեր ժամկետ ասելով հասկանում էին ժամանակի պահ ու ենթադրվում է, որ «դատավարական ժամկետը մշտապես տեւողություն է»: Քրեադատավարական օրենքը մի շարք նորմերում պարունակում է որևէ դատավարական գործողության կատարում մեկ այլ դատավարական գործողության հետ մեկտեղ կամ մինչ դրա վրա հասնելը, կամ դրա ավարտվելը, կամ որոշակի իրադարձության տեղի ունենալը, այսինքն՝ օգտագործում է ժամկետ-պահեր հասկացությունը:

Ինչպես արդեն նշեցինք, ողջամիտ ժամկետի իրավունքի պահպանումը պետության պոզիտիվ պարտականությունն է, եւ հարկ է ընդգծել, որ ներպետական դատարանների ժամանակավոր ծանրաբեռնվածությունը չի հանգեցնում պետության պատասխանատվության, եթե պետությունը ձեռնարկում է այդ-օրինակ իրավիճակները շտկելուն միտված գործողություններ: Հետեւաբար՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքը խախտելու համար պատասխանատվությունն ամբողջապես կրում է պետությունը, որից վերջինս կարող է ազատվել, եթե անհապաղ ձեռնարկել է հետագա խախտումները բացառելուն ուղղված միջոցներ: Ի դեպ, այդ միջոցների արդյունավետությունը գնահատելու իրավասությունը տրված է միայն Եվրոպական դատարանին:

Իրավաբանական գրականության մեջ «ողջամիտ ժամկետ» կատեգորիայում «ժամկետ» բառը ենթադրվում է առաջին հերթին որպես տեւողություն, եւ դիտվող կատեգորիայի հիմնական խնդիրը հարցադրումն է, թե քրեադատավարական գործունեության ինչպիսի՞ տեւողությունը կարելի է համարել ողջամիտ:

Օրենսդիրը ողջամիտ ժամկետներ պահպանելու պահանջը վերագրում է դատավարական գործունեությանը, ինչը չի ենթադրում հստակ իրավական կարգավորում ու հասցեագրում է հետաքննական մարմիններին, դատախազին, դատարանին: Ըստ որում՝ ողջամիտ ժամկետների բնորոշումը չի սահմանում, այլ ձեւավորում է մոտեցումներ, որոնցով անհրաժեշտ է սահմանել, թե արդյո՞ք կոնկրետ քրեական գործին տրված ժամկետը ողջամիտ է:

Կասկածներ է հարուցում մասնավորապես այն, որ ողջամիտ ժամկետի հետհաշվարկի սկիզբ ընդունված է քրեական հետապնդման մեկնարկը, ինչը հստակ օրենսդրական կարգավորումներ չի ենթադրում, ըստ որում՝ անուշադրության է մատնված քրեադատավարական գործունեությունը քրեական գործի հարուցման պահին, ինչպես նաև հետաքննության պահը՝ մինչ կասկածյալի ի հայտ գալը:

[7] Տե՛ս «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. Կոնվենցիայի մեկնաբանություն: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը». Գիտական խմբագիր Գ.Հարությունյան, Եր., 2005, էջեր 212-214:

Թյուրըմբռնումների տեղիք է տալիս նաեւ այն, որ ժամկետի ավարտ է համարվում քրեական հետապնդման կասեցումը կամ մեղադրական որոշման կայացումը, այլ ոչ թե ըստ գործի վերջնական որոշման կայացումը:

Պետք է նաև ուշադրություն դարձնել այն փաստին, որ ժամկետի ողջամտության այն մոտեցումը, ինչպիսին է «դատարանի, դատախազի, քննչական մարմնի ղեկավարի, հետաքննության մարմնի ղեկավարի գործողությունների բավարարությունն ու արդյունավետությունը, որոնք կատարվել են քրեական հետապնդման կամ քրեական գործի համաժամանակյա իրականացման նպատակով», չի պարունակում օբյեկտիվ հատկանիշներ ու գործողության ժամկետի ողջամտության գնահատականը ամբողջությամբ կախված կլինի այն հանգամանքի դիտարկումից, թե ով է այդ գնահատումն իրականացնելու[8]:

Ողջամիտ ժամկետների պահպանումը նախեւառաջ պահանջ է, որը միտված է իրավակիրառողին, ով պարտավոր է բավարար ու արդյունավետ կերպով կատարել իր գործունեությունը այնպես, որ քրեական դատավարության ընդհանուր տնողությունը ողջամիտ լինի:

Ըստ որում, «ողջամիտ ժամկետներ» եզրույթն ինքն իրենով հանդիսանում է անորոշ, գնահատողական հասկացություն: Եթե ողջամիտ ժամկետներ կատեգորիան դիտարկենք միայն այդ տեսանկյունից, ապա պետք է ընդունենք, որ գործի ընթացքի երկարատևությունը տեղի է ունենում այն անձանց կամ մարմինների մեղքով, որոնք իրականացնում են գործի ընթացքը: Միաժամանակ գործի ձգձգումը կարող է կապված լինել գործընթացի այլ մասնակիցների հետ, որոնք խոչընդոտում են համաժամանակյա քննությանը կամ գործի քննությանը դատարանում:

Հեղինակը լրիվ արդարացիորեն ողջամիտ ժամկետների գնահատումը պայմանավորում է ոչ միայն «քրեական գործի գործողության ժամանակ գործադրած ջանքերով», «հետաքննության մարմիններով կամ դատարանով», այլև հենց ժամկետով, որը հաշվվում է տարիներով ու ամիսներով, նաև՝ կողմերի պահվածքով, գործի բարդությամբ:

Ա.Վ.Օբրազցովը նույնացնում է ողջամիտ ժամկետը դատավարական գործունեության օրինականության ու հիմնավորվածության հետ: Հայտնի է, որ օրենքում սահմանված են ժամկետներ այս կամ այն դատավարական գործողությունների համար ու այդ իմաստով դատավարական ժամկետների պահպանման պահանջը հենց օրինականության պահանջն է[9]:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ օրենքով դատավարության ոչ բոլոր փուլերի համար են նախատեսված ժամկետներ, մասնավորապես՝ քրեական գործը առաջին ատյանի դատարանում ըստ էության քննելու ու թույլատրելու համար, իսկ ընդհանուր առմամբ քրեական դատավարության ընդհանուր տևողությունը չի կարգավորվում: Դրա համար հիմքեր չկան ողջամիտ ժամկետը օրինականության ու հիմնավորվածության հետ նույնականացնելու համար:

Հետազոտություններում, որոնք նվիրված են քրեական գործերի ընթացքի ժամանակային ու համաժամանկյա սկզբունքներին, ուշադրություն է հատկացվում նրան, որ օրենքում ժամկետների մեծամասնությամբ քրեական դատավարության մարմնի որևէ գործողության կատարման համար առկա է առավելագույն թույլատրելի տեւողություն և որ օրենսդիրը նախնական քննության ժամկետների կարգավորման ժամանակ խուսափում է ավելորդ խստությունից, իսկ ընդհանուր առմամբ բոլոր ժամկետները սահմանված են որոշակի պաշարով:

Դա բացատրվում է նրանով, որ օրենսդիրը, ով հետաքրքրված է գործընթացի բնականոն եւ արագ ընթացքով, միաժամանակ զրկված է բոլոր այն առանձնահատկությունները հաշվի առնելու հնարավորությունից, որոնք կապված են յուրաքանչյուր կոնկրետ գործի ընթացքի հետ: Առավելագույն ժամկետների օգնությամբ նա կարող է միայն կանխել գործով քննության ձգձգումը:

Վ.Մ.Սավիցկին արդարացիորեն գտնում է, որ «հետաքննության ժամկետի գերկրճա-

[8] Տե՛ս Аширбекова М.Т., Кудин Ф.М. "Разумный срок" как оценочное понятие в уголовно-процессуальном праве // Уголовное судопроизводство. 2011. N 2. էջեր 21 - 25:

[9] Տե՛ս Образцов А.В. От разумных сроков в уголовном процессе к принципу разумности//Российский следователь. 2011. N16, էջեր 32-33:

տումը, որը չի բացատրվում գործի կոնկրետ հանգամանքներով, կարող է հանգեցնել նրան, որ քննության ժամանակ բաց կթողնվեն կարևոր ապացույցներ, աննկատ կմնան հանցագործության իրական պատճառները, շարժառիթները, այլ կերպ ասած՝ կխեղվի հետաքննության ու դատաքննության հեռանկարը»[10]:

Մ.Ս.Ստրոգովիչը մատնանշում է. «Հետաքննության արագացված ավարտը ոչ մի դեպքում չպետք է ստացվի հետաքննության որակի, լայնության ու օբյեկտիվության հաշվին»[11]: Ժամկետները պետք է բավարար լինեն ոչ միայն գործով բոլոր դատավարական գործողությունների իրականացման համար, այլեւ որպեսզի ամբողջությամբ ապահովվի գործընթացի մասնակիցների իրավունքները, իսկ ընթացքը ընդհանուր առմամբ արդյունավետ լինի:

Այդ պատճառով էլ օրենսդրի առաջ դրված է խնդիր՝ սահմանել օպտիմալ, նպատակային ժամկետներ այս կամ այն դատավարական գործողության կատարման համար ու միաժամանակ կանխել գործընթացի ծայրահեղ երկար տեւողությունը, հանձնարարել գործընթացի խնդիրների հաջող լուծման համար անհրաժեշտ տեմպը:

Ա.Յու.Սմոլինը այս առիթով նկատում է, որ Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների մասին Կոնվենցիայով դատական գործընթացի ողջամիտ ժամկետների պահանջը ուղղված է ոչ միայն իրավակիրառողին, այլև օրենսդրին՝ պարտավորեցնելով վերջինիս ավելի հավասարակշռված մոտենալ դատավարական ժամկետների նորմատիվային սահմանմանը[12]:

Անկասկած, օրենքում պետք է սահմանվեն ոչ միայն որոշակի ժամկետներ, այլեւ դրանց պահպանման երաշխիքներ, վերահսկողության դատավարական կառուցակարգեր: Քրեադատավարական ձևը, ապահովելով քրեական գործի ընթացքը, պետք է ներառի ոչ միայն դատավարական գործողությունների, հիմքերի, պայմանների, միջոցառումների ու ընթացքի ժամկետների հաջորդականության կարգավորում, այլեւ գործով որոշումների կայացման ժամանակ կիրառվելիք գործողությունների օրինականության, հիմնավորվածության, համաժամանակյա բնույթի խիստ համակարգային վերահսկողություն:

Ինչ վերաբերում է իրավակիրառողին (հետաքննության մարմիններ, դատախազ, դատավոր), ապա նրանց առջեւ պետք է հստակ դրվի դատավարական ժամկետների խստագույն պահպանման օրենսդրական պահանջը: Այդ խնդիրը ենթադրում է դատավարական գործունեության իրագործում՝ առանց ժամանակային ավելորդ ծախսի:

Օրինակ՝ հանցագործության վերաբերյալ հաղորդմամբ քրեական գործի հարուցման որոշման կայացման համար որոշ դեպքերում բավարար է մի քանի ժամը, երբեմն՝ մի քանի րոպեն, ու անհրաժեշտություն չկա օգտագործել երեք օր: Նախնական քննությունը կարող է ավարտվել ոչ թե երկու ամիս ժամկետում, այլ ավելի շուտ եւ այլն:

Ենթադրվում է, որ երբ խոսքը գնում է դատավարության ողջամիտ ժամկետների մասին, նկատի է առնվում նախեւառաջ դրա տեւողությունը: Այսպես, Ա.Վ.Սմիրնովը ու Կ.Բ.Կալինովսկին, ընդունելով ողջամտությունը որպես գործընթացի սկզբունք, նկատում են, որ «ավելի վաղ տեսության մեջ շոշափվում է շտապողականության սկզբունքը, իսկ այն ըստ Դալի նշանակում է արագ, անդադրում, հապճեպ»[13] :

«Ողջամտությունը» ավելի բարդ հասկացություն է, որը չի ենթադրում օբյեկտիվ չափում: Այսպես՝ Վ.Մ. Ժուկովսկին համարում է, որ «շտապողականություն» եզրույթն արտացոլում է ժամանակի քանակական կողմը՝ տեւողությունը, իսկ համաժամանակությունը՝ արագության հետ համեմատած առավել բովանդակալից պահանջներ է ներկայացնում: Հեղինակը համաժամակության հասկացության մեջ տեւողության պահանջներին զու-

[10] Տե՛ս Савицкий В.М. Прокурорский надзор за дознанием и предварительным следствием. М.: Госюриздат, 1959. էջեր 15 - 16:

[11] Տե՛ս Строгович М.С. Курс советского уголовного процесса. М.: Наука, 1970. Т. 2. էջ 65:

[12] Տե՛ս Смолин, А. Ю. Разумный срок уголовного судопроизводства – проявление принципа процессуальной экономии, Российский следователь. – 2010. – № 19:

[13] Տե՛ս Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс: Учебник / Под общ. ред. А.В. Смирнова. 4-е изд., перераб. и доп. М.: КНОРУС, 2008, էջ 69:

գահեռ ներառում է կատարվող գործողությունների հաջորդականությունը[14]:

Ելնելով հաջորդականություն՝ գործողությունների հերթականություն ու համաժամանակություն՝ իր ժամանակին, անհրաժեշտ պահին կատարվող բառերի իմաստից, ենթադրում ենք, որ քրեադատավարական գործունեության տեսանկյունից համաժամանակությունը իրավակիրառողի կողմից օրենքով սահմանված ժամկետների պահպանումն է, ինչպես նաև իրավական կարգավորման բացակայության դեպքում՝ տվյալ հանգամանքներից ելնելով գործողությունների կատարումը:

Կարծում ենք, որ հաշվի առնելով քրեադատավարական գործունեության տևողության կրճատման պահանջների՝ առաջին պլան մղվելը, ժամկետի վերաբերյալ առավել ստույգ կլինի «շտապողականություն» եզրույթի, այլ ոչ թե համաժամանակություն եզրույթի կիրառումը:

Պ.Յա.Սոկոլը կարծիք է հայտնել, որ «շտապողականությունը հանդես է գալիս ոչ թե որպես քրեական դատավարության կամ քրեադատավարական առանձին նորմերի խնդիր, այլ բացառապես որպես օպտիմալության կամ դատավարական խնայողության տարր»[15] :

Անկասկած, դատավարական ժամկետների խնայողությունը պայմանավորում է գործընթացի շտապողականությունը՝ միայն դատավարական անհրաժեշտ գործողությունների կատարումը, ավելորդ ձևականությունների բացառումը, որեւէ միջոցառման բացառումը կամ դրա կրճատումը նյութական կամ այլ միջոցների խնայողության հետ մեկտեղ նպաստում է գործընթացի արագացմանը: Միևնույն ժամանակ դատավարական ժամկետների խնայողությունը, շտապողականությունից խուսափելու հետ մեկտեղ ինքնուրույն պահանջ է քրեական դատավարության ոլորտում:

Ժամանակակից իրավաբանական գրականության մեջ քրեական դատավարության առանձին հիմնական խնդիրների մեջ մատնանշվում են գործընթացի կրճատման կամ արագացման խնդիրները: Անկասկած է, որ ինչպես ժամկետների, այնպես էլ դատավարական ժամկետների խնայողության մասին հոգսը պետք է կրեն ինչպես օրենսդիրը՝ քրեական դատավարության գործունեությունը կարգավորող նորմերը սահմանելիս, այնպես էլ իրավակիրառողը: Հետաքննության մարմինները, դատախազը, դատարանը պարտավոր են իրականացնել միայն ըստ էության գործողություններ, առանց թույլ տալու գործողությունների կամ որոշումների անհիմն ձգձգում: Նրանց համար առավել կարևորվում է քրեական գործի հանգամանքների քննության լիարժեքության ու համակողմանիության ապահովումը, այլ ոչ թե դատավարական ժամկետի խնայողությունը: Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ նախնական քննության ժամանակ փաստացի հանգամանքները պետք է «ամրության պաշարով» սահմանվեն, պետք է ստեղծվի ապացուցողական բազայի ռեզերվ այն դեպքում, երբ գործի հետագա քննության ժամանակ առանձին ապացույցներ կասկածի տակ կառնվեն կամ կբացառվեն:

[14] Տե՛ս Жуковский В.М., Նշվ. աշխ., էջ 13:

[15] Տե՛ս Сокол П.Я. Процессуальные гарантии быстроты предварительного расследования: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1990., էջ 55: